# Ակադեմիկոս Էմիլ Սամսոնի Գաբրիելյանի հիշատակին

Կյանքից հեռացավ Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի իսկական անդամ, ՀՀ Առողջապահության նախարարությանն առընթեր Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների գործակալության տնօրեն, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էմիլ Սամսոնի Գաբրիելյանը, իր գործունեությամբ խորը հետք թողնելով Հայաստանի առողջապահության և բժշկագիտության զարգացման մեջ:

Է. Ս. Գաբրիելյանը ծնվել է 31.01.1931 թ.-ին ք. Աշտարակում: 1954 թ.-ին ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը:

Նա անցել է բեղմնավոր ստեղծագործական ուղի, աշխատելով

- 1971-1975թթ. Երևանի բժշկական ինստիտուտի ռեկտոր;
- 1975-1989թթ. ՀԽՍՀ առողջապահության նախարար;
- 1988-1994թթ. Երևանի բժշկական ինստիտուտի դեղաբանության ամբիոնի վարիչ;
- 1992 թվականից՝ ՀՀ Առողջապահության նախարարությանն առընթեր Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների գործակալության տնօրեն;
- 1994 – 2006 թթ.՝ ՀՀԳԱԱ փոխպրեզիդենտ և Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀԳԱԱ նախագահության անդամ:

Է.Գաբրիելյանն իր ամբողջ գործունեության ընթացքում, գերազանց կատարելով իր վրա դրված պարտականությունները, մնացել է նվիրված գիտությանը՝ համատեղելով աշխատանքը Բժշկական ինստիտուտի դեղաբանության ամբիոնի պրոֆեսորի և Արյան շրջանառության դեղաբանության գիտահետազոտական լաբորատորիայի վարիչի պարտականությունների հետ:

Նրա նախաձեռնությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնք սկզբունքային նշանակություն են ունեցել հանրապետության առողջապահության և բժշկագիտության զարգացման համար:

Անվանի գիտնականը, որի անունը վաղուց դուրս է եկել հանրապետության սահմաններից, պատրաստել է 11 դոկտոր և 18 թեկնածու, ակտիվորեն մասնակցել Հայաստանում դեղաբանության զարգացմանը՝ իր ավանդը ներդնելով բժշկագիտության բնագավառի առաջընթացում:

Է.Գաբրիելյանը կազմակերպել է դեղաբանների համամիութենական համագումար, սովետահնդկական գիտաժողով, ուղեղի արյան շրջանառությանը նվիրված կոնֆերանսներ, խմբագրել մի շարք մեծարժեք աշխատություններ:

Էմիլ Գաբրիելյանի գիտական աշխատանքների ցուցակն ընդգրկում է ավելի քան 330 անվանում, այդ թվում՝ 4 մենագրություն, 4 դասագիրք և «Լինել թե չլինել», «Փլուզում» գրքերը: Է.Գաբրիելյանի մենագրությունները բարձր են գնահատել այնպիսի խոշոր գիտնականներ, ինչպիսիք են Ա.Մ.Հարպերը, Գ.Մ. Դոուլը, Ա.Վ.Վալդմանը, Մ.Դ. Մաշկովսկին, Վ.Վ.Զակուսովը, Ե.Ի. Չազովը և ուրիշներ: Նրա ստացած տվյալները հնարավորություն ընձեռեցին առաջադրելու նոր հայեցակարգ հեմատոգեն անգիոսպազմի արդյունքում ուղեղային արյան շրջանառության խանգարումների մեխանիզմի մասին: Անվանի գիտնականը իր գիտական արդյունքների մասին բազմիցս հանդես է եկել միջազգային գիտաժողովներում, այդ թվում՝ Մյունխենում, Սան-Ֆրանցիսկոյում, Հելսինկիում, Փարիզում, Տոկիոյում, Լոնդոնում, Սարաևոյում, Լոս-Անջելոսում և այլուր:

Անվանի գիտնականը ներկայացված է միջազգային 10 հանրագիտարաններում:

Գիտնականն արժանացել է բազմաթիվ մրցանակների, միջազգային և կառավարական պարգևների և շնորհների:

Ակադեմիկոս Է.Գաբրիելյանը առաջին հայ գիտնականն է, որն արժանացել է Միավորված ազգերի գիտության, կրթության և մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՈ) միջազգային Կալինգայի մրցանակին, որին մինչև այժմ արժանացել են աշխարհի գիտության և մշակույթի ընդամենը 53 ականավոր գործիչներ:

Է.Ս.Գաբրիելյանի համար գիտության նվաճումները ժողովրդական լայն զանգվածներին հասցնելու հրամայականը միշտ եղել է կարևոր խնդիր: Այսպես, ՅՈՒՆԵՍԿՈ-ի Կալինգայի անվան մրցանակի հանձնման արարողությունից հետո նա ասաց. «...գիտության նվաճումների պոպուլյարիզացիան հասարակության բոլոր խավերի մեջ հանդիսանում է այն հզոր ուժը, որն ապահովում է ինչպես հասարակության, այնպես էլ բուն իսկ գիտության հետագա զարգացումը: Դա ապացուցում է հասարակության և գիտության զարգացման փոխհարաբերությունների պատմությունը»:

Ակադեմիկոս Է.Գաբրիելյանը, հանդիսանալով վառ անհատականություն, լինելով արտակարգ զգայուն ու բարձր ինտելեկտով օժտված, հոգեպես հարուստ ու բարեսիրտ անձնավորություն, վայելել է հայ և օտար գիտնականների ու բժիշկների սերն ու հարգանքը:

Անվանի բժիշկ-գիտնականի, առողջապահության և գիտության կազմակերպչի՝ ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի մահը մեծագույն կորուստ է Հայաստանի բժշկագիտության և առողջապահության համար:

***ՀՀ ԳԱԱ Նախագահություն,***
***«Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի խմբագրական կոլեգիա***